



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 դեկտեմբերի 2011 թվականի N 1758 - Ն

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն 2010 թվականի
Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր Ի 30-ի N 1772-Ն Ո Ր Ո Շ Մ Ա Ն Մ Ե Ջ Փ Ո Փ Ո Խ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր
Ե Վ Լ Բ Ա Ց Ո Ւ Մ Ն Ե Ր Կ Ա Տ Ա Ր Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է .

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի «Ապրանքի ծագման երկրի հավաստագրի տրամադրման և փորձաքննության անցկացման կարգը հաստատելու», Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 31-ի N 895 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 24-ի N 1246 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1772-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները .

1) որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ .

«3. Հայաստանի Հանրապետության իրավաբանական ու ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից արտահանվող ապրանքների համար Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատի կողմից ծագման երկրի հավաստագրի տրամադրման վճարի չափը սահմանել .

1) փորձաքննություն պահանջող ապրանքների արտահանվող առաջին խմբաքանակին տրամադրված հավաստագրերի համար՝ 30000 դրամ ներառյալ ավելացված արժեքի հարկը .

2) փորձաքննություն չպահանջող ապրանքների համար՝ տրամադրված ծագման երկրի հավաստագրերի համար՝ 10000 դրամ ներառյալ ավելացված արժեքի հարկը .

3) փորձաքննություն չպահանջող Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ մինչև 2,5 տոննա US Գ Ա Ա 07 (բանջարեղեն և որոշ ուտելի արմատապտուղներ և պալարապտուղներ), 08 (ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային մշակաբույսերի և սեխի կեղևներ և կճեպներ) և 10 (հատիկաբույսեր) խմբերին դասվող գյուղատնտեսական մթերքների համար տրամադրված հավաստագրերի համար՝ 2000 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը :».

2) ուժը կորցրած ճանաչել որոշման 4-րդ կետը .

3) որոշման 1-ին կետով հաստատված կարգում

ա. 4-րդ կետում «2000 թվականի նոյեմբերի 30-ին Միսսուրիում»
բառերը փոխարինել «2009 թվականի նոյեմբերի 20-ին Յալթայում»
բառերով, իսկ «US -1» ձևով` բառերը` «US -1» («CT-1») ձևով`
նույն կետում» բառերով,

բ. 5-րդ կետում «Ա» ձևով` բառերը փոխարինել «Ա» («A») ձևով`
անգլերենով» բառերով,

գ. 6-րդ կետը «ընդհանուր ձևով`» բառերից հետո լրացնել
«անգլերենով» բառերով,

դ. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Հայաստանի Հանրապետությունում արտադրված ապրանքների
ծագումը որոշելու և հավաստագիր տրամադրելու, համար
փորձաքննություններ և հրականագվում է հետևյալ դեպքերում`

1) արտադրության մշտական անվանագանկի համար` տվյալ
դեպքում ակտը տրամադրվում է մինչև մեկ տարի ժամկետով (ժամկետ
որոշում է դիմողը)».

2) մեկ պարամետրի շրջանակներում հրականագվող առաքման
(առաքումների) համար»,

ե. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր` 10.1-ին
կետով.

«10.1. Հայաստանի Հանրապետությունում ապրանքի ծագումը
որոշելու համար փորձաքննություններ և հրականագվում է հետևյալ
դեպքերում`

1) Հայաստանի Հանրապետությունում ամբողջությամբ
արտադրված ապրանքների համար: Նշված ենթակետում ներառվում են
Հայաստանի Հանրապետության մարտահանման օրենսգրքի 160-րդ հոդվածով
սահմանված ապրանքները.

2) սույն կարգի 10-րդ կետով նախատեսված` մեկ անգամ
հավաստագիր ստացած արտահանվող ապրանքների խմբաքանակների
արտադրության համար, եթե օգտագործված հումքատեսակները և (կամ)
արտադրական գործընթացները մնում են անփոփոխ:»,

զ. 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Ապրանքների ծագման երկրի հավաստագիր ստանալու համար
Հայաստանի Հանրապետության իրավաբանական, ֆիզիկական անձինք և
անհատ ձեռնարկատերերը թողթային կամ էլեկտրոնային եղանակով
Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատին
ներկայացնում`

1) սույն կարգի 10-րդ կետում նշված դեպքերի համար`

ա. դիմում` հայտարարագիր` համաձայն N 1 ձևի,

բ. հումքի ձեռքբերմանը և ծագման երկրին վերաբերող
փաստաթղթեր, ինչպես նաև` փաստաթղթեր, որոնք հավաստում են
արտահանվող ապրանքի` Հայաստանի Հանրապետությունում
արտադրվելու մասին,

գ. տեխնոլոգիական քարտեզ կամ այլ փաստաթղթեր, որոնց հիման
վրա իրականացվում են արտադրական գործընթացները,

դ. ապրանքների առաքման ձևակերպման փաստաթղթերի (հաշիվ-
ապրանքագրի կամ դրան համարժեք արտաքին տնտեսական
գործունեության մեջ օգտագործվող այլ փաստաթղթերի պատճենները
(սույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը ֆիզիկական անձինք
ներկայացնում են ըստ իրենց ցանկության),

ե. հաշվապահական փաստաթղթեր, որոնք թույլ են տալիս պատշաճ
կերպով որոշել ապրանքի ծագման երկիրը,

զ. վճարման անդորրագիր.

2) սույն կարգի 10.1-ին կետի «ա» պարբերությունում նշված
դեպքերի համար` բացառությամբ ԱՏԳ ԱԱ 07 (բանջարեղեն և որոշ
նուսեղի արմատապտուղներ և պալարապտուղներ), 08 (նուսեղի մրգեր և

ընկույզներ, ցիտրուսային մշակաբույսերի և սեխի կեղևներ և կճեպներ) և 10 (հատիկաբույսեր) խմբերին դասվող ապրանքների՝

ա. դիմում մեջ հայտարարագիր՝ համաձայն N 1 ձևի,

բ. հումքի արդյունահանման և վերամշակման իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը,

գ. տեղեկանք կամ հայտարարագիր տարեկան արտադրության հզորության մասին,

դ. վճարման անդորրագիր.

3) սույն կարգի 10.1-ին կետի «բ» պարբերությունում նշված դեպքերի համար

ա. դիմում մեջ հայտարարագիր՝ համաձայն N 1 ձևի,

բ. վճարման անդորրագիր.

4) Հայաստանի Հանրապետությունում արտադրված US Գ ՍՍ 07 (բանջարեղեն նորոշումներ և սեխի արմատապտուղներ և պալարապտուղներ), 08 (նուսեղի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային մշակաբույսերի և սեխի կեղևներ և կճեպներ) և 10 (հատիկաբույսեր) խմբերին դասվող գյուղատնտեսական մթերքների համար

ա. դիմում մեջ հայտարարագիր՝ համաձայն N 1 ձևի,

բ. տեղեկանք կամ հայտարարագիր արտադրության մասին (նշված ապրանքներն արտադրող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար)՝ համաձայն N 5 ձևի, կամ գնմանը վերաբերող փաստաթուղթ: Նշված ապրանքները ֆիզիկական անձանցից գնելու դեպքում իրավաբանական անձինք պետք է ներկայացնեն հայտարարագիր՝ համաձայն N 6 ձևի,

գ. տեղեկատվություն ներմուծողի մասին՝ երկիրը և անձի անվանումը,

դ. վճարման անդորրագիր:».

է. 12-րդ կետում «11-րդ կետի 1-ին ենթակետով» բառերը փոխարինել «10-րդ կետով» բառերով,

ը. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 17.1-ին կետով.

«17.1. Առաքվող ապրանքի փաստացի քանակությունը կարող է գերազանցել հավաստագրում նշված քանակությունը՝ ոչ ավելի, քան 5 տոկոսի չափով:».

թ. կարգի N 1 ձևը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին և 4.2-րդ կետերով.

«4.1. Հաշիվապահագրի համարը, ամսաթիվը.

4.2. Փորձաքննության ակտի համարը, ամսաթիվը:».

ժ. 22-րդ կետում «11-րդ կետի 1-ին ենթակետով» բառերը փոխարինել «10-րդ կետով» բառերով,

ժա. 24-րդ կետում «3-օրյա ժամկետում» բառերը փոխարինել «երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով,

ժբ. 24-րդ կետն առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Փորձաքննության հիման վրա արտադրության մշտական անվանացանկի համար՝ մինչև մեկ տարի ժամկետով (ժամկետը նորոշում է դիմողը) հավաստագրի տրամադրվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում: Անանց փորձաքննության ծագման երկրի հավաստագրի տրամադրվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում:».

ժգ. 25-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետով.

«4) դիմողի կողմից չի ներկայացվել համապատասխան վճարման անդորրագրեր».

ժդ. 26-րդ կետում «երկօրյա» բառը փոխարինել «երկու աշխատանքային օրվա ընթացքում» բառերով,

Ժե . կարգը լրացնել նոր՝ **NN 5** և **6** ձևերով՝ համաձայն **NN 1** և **2** հավելվածներին :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը :

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ի Թ Յ Ա Ն
Վ Ա Ր Չ Ա Պ Ե Տ

Տ . Ս Ա Ր Գ Ս Յ Ա Ն

2011 թ . դեկտեմբերի 19
Երևան

Հավելված N1
ՀՀ կառավարության 2011
թվականի
դեկտեմբերի 1-ի N1758 - Ն
նրոշման

Ձև N5

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ա Գ Ի Ր

Ես՝

_____ անունը, հայրանունը, ազգանունը՝

_____ (բնակության վայրը, հեռախոսահամարը)

_____,
(անձնագրի տվյալները)

իմ _____ սեփական _____ հողատարածքում
(մարզը, գյուղը)

աճեցրել
եմ _____ (ապրանքի անվանումը),

քանակությունը՝ _____, _____ քաշը՝
(տեղ) : (բրնձ, նետո)

Արտահանվող _____ երկիրը

Տրանսպորտային _____ միջոցը

Ներկայացված _____ տեղեկատվության _____ համար _____ կրում _____ եմ
պատասխանատվությունները :

_____ (անունը, ազգանունը, ստորագրությունը)

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ր Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ձ Մ Ի
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Դ . Ս Ա Ր Գ Ս Յ Ա Ն

Հավելված N2
ՀՀ կառավարության 2011
թվականի
դեկտեմբերի 1-ի N 1758 - Ն
նրոշման

Ձև N6

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ա Գ Ի Ր

_____ (կազմակերպության անվանումը)

ձեռք էր բերել

_____ (ապրանքի անվանումը)

աճեցված`

_____ (մարզը, գյուղը)

արտահանելու համար _____, քանակությունը`

_____ (երկիրը)

(տեղ)

քաշը` _____ :
(բրնձ, կեղև)

Կից ներկայացնում եմ`

ձեռք բերման փաստաթղթերը .

ձեռք բերման փաստաթղթերը պահպանվում են

հասցեում : Անհրաժեշտության դեպքում պարտավորվում եմ տրամադրել :

~~Ներկայացված տեղեկատվությունը համարվում է անհատական տվյալներ :~~

Տնօրեն _____

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ի Թ Յ Ա Ն
Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Ո Ի Թ Յ Ա Ն Ա Շ Խ Ա Ս Ա Վ Ա Ձ Մ Ի
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Դ • Ս Ա Ր Գ Ս Յ Ա Ն